**Գործ թիվ ԵԴ2/2940/02/26**
**Քաղվածք**

**ՎՃԻՌ**
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ**

08.06.2026թ. ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը (այսուհետ՝ Դատարան), հետևյալ կազմով՝

*նախագահությամբ՝ դատավոր* Դ. ՕՀԱՆՅԱՆԻ

գրավոր ընթացակարգով քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի «Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ի (ՀՎՀՀ՝ 00001672, պետական գրանցման համար՝ 264.140.00174, հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Հ. Հակոբյան 3) (այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ ՀՀ Պաշտպանության նախարարության (ՀՎՀՀ՝ 02522157, պետական գրանցման համար՝ 282.184.1116621, հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Հ. Հակոբյան 3)՝ (այսուհետ՝ Ընկերություն)՝ ՀՀ պաշտպանության նախարարության և Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտի ՓԲ ընկերության միջև 26.12.2018 թվականին կնքված hմ ՄԱԱՇՁԲ -13-32 ծածկագրով գնման պայմանագիրը միակողմանի ամբողջությամբ լուծելու մասին 26.02.2026 թվականի թիվ ՊՆ 12/342 գրությամբ ներկայացված որոշումը (ծանուցումը) և 06.03.2026 թվականի «Գնումների գործընթացին մանակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում» թիվ 206 որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին,

**ՎՃՌԵՑ**

1. «Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ի հայցն ընդդեմ ՀՀ Պաշտպանության նախարարության՝ ՀՀ պաշտպանության նախարարության և Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտի ՓԲ ընկերության միջև 26.12.2018 թվականին կնքված hմ ՄԱԱՇՁԲ -13-32 ծածկագրով գնման պայմանագիրը միակողմանի ամբողջությամբ լուծելու մասին 26.02.2026 թվականի թիվ ՊՆ 12/342 գրությամբ ներկայացված որոշումը (ծանուցումը) և 06.03.2026 թվականի «Գնումների գործընթացին մանակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում» թիվ 206 որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, մերժել:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

**ԴԱՏԱՎՈՐ** **Դ. ՕՀԱՆՅԱՆ**